




ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
«ԱՐԽԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ»



Ա. Միհասյան Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«13» 04 2017թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 36


Ձեռնարկողը՝

«*Էյ Թի Էմ Էս Սոյուզնս*» ՍՊԸ
Ք. Երևան, Վ. Սարգսյան 26/3

Գործունեությունը՝

«*Իջևան*» էլ. ցանց Վազաշեն գյուղում տեղադրվող
400/6կՎԱ հզորության LSԵ-ի 6կՎ էլեկտրամատակարարում»
նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն
«Տավուշի մարզ»

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրեն՝



Վ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԸՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԸՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 36

«13» 04 2017թ.

"Իջևան" էլ.ցանց, Վազաշեն գյուղում տեղադրվող 400/6 կՎԱ հզորության ԼՏԵ-ի 6 կՎ էլեկտրամատակարարում" նախագծի գնահատման հաշվետվության վերաբերյալ

Պատվիրատու՝	«Էյ Թի Էմ Էս Սոլյուշնս» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն և կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	«Բ»
Տեղադրման վայրը՝	«Տավուշի մարզ

Handwritten signature

«Ստիմուլ» ՍՊԸ հայտ է ներկայացրել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ (այսուհետ՝ «ՀԷՑ» ՓԲԸ) իր տրասնֆորմատորային ենթակայանի (ԼՏԵ) 6 կՎ էլեկտրամատակարարումը ապահովելու համար: Արդյունքում, «ՀԷՑ» ՓԲԸ տեխնիկական տնօրինության կողմից տրված էլեկտրական ցանցին միացման 19.12.2012 թ.-ի թիվ 5930111 պատվերի և 29.10.2014 թ.-ի ՌԽ 2392 գրության հիման վրա մշակվել են տեխնիկական պայմաններ, որոնց հիման վրա «ՀԷՑ» ՓԲԸ-ի Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի բաժինը մշակել է «Իջևան» էլ.ցանց, Վազաշեն գյուղում տեղադրվող 400/6 կՎԱ հզորության ԼՏԵ-ի 6 կՎ էլեկտրամատակարարում» աշխատանքային նախագիծը: Իրականացվող գործունեության նպատակն է՝ ապահովել սպառողի էլեկտրամատակարարումը՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 27.12.2006 թ.-ի թիվ 358-Ն որոշման պահանջների համաձայն:

Նախատեսվում է կառուցել 6 կՎ օդային գիծ Վազաշեն համայնքի վարչական տարածքում «Ստիմուլ» ՍՊԸ-ի կողմից տեղադրվող ԼՏԵ-ի էլ. սնուցման համար: ԼՏԵ-ի էլեկտրասնուցումը իրականացվելու է «Բետոնիտ» 35/6 կՎ ենթակայանից դուրս եկող 6 կՎ «Վազաշեն» ՕԳ-ի թիվ 189.21 հենասյունից, որից ճյուղավորվելու է կառուցվող 1200մ երկարությամբ օդային գիծը:

Նախատեսվող գործունեության տարածքի հատակագիծը՝ 1200մ երկարությամբ էլեկտրամատակարարման օդային գծով համաձայնեցված է Վազաշեն համայնքի, «ՀԷՑ» ՓԲԸ «Իջևան» էլ. ցանցի և «Աղստև» մասնաճյուղի ղեկավարների հետ:

Նախագծվող օդային գիծը ցանցից անջատելու և միացնելու համար նախատեսվում է 6 կՎ օդային գծի թիվ 1 և թիվ 23 փայտե հենասյուների վրա տեղադրել ՔԼԻԿԴ.1-10/400Վ1 տիպի գծային բաժանիչներ, ՈՓԻՑ-10Վ1 տիպի շարժաբերով: Թիվ 23 հենասյան վրա տեղադրվող



գծային բաժանիչը տեղադրվում է սպառիչի կողմից: Նախագծվող ՕԳ-ը կառուցվելու է նոր փայտե հենասյուներով մինչև պատվիրատուի կողմից տեղադրվող LST-ն:

Համաձայն ТПЗ.407-85 տիպային նախագծի 6 կՎ օդային զծում նախատեսվում է տեղադրել հետևյալ տիպի փայտե հենասյուները՝ Միահենակ (խարսխային վերջնամասային) АК10-3ДБ տիպի (թիվ 1, 23 հենասյուները), Միահենակ (անկյունային միջանկյալ) УП10-3ДБ տիպի (թիվ 4, 7, 9, 10, 15, 16, 17, 22 հենասյուները), Միականգնակ (միջանկյալ) П10-8ДБ տիպի (թիվ 2, 3, 5, 6, 8, 11-14, 18-21 հենասյուները):

Ելնելով տարածքի կլիմայական պայմաններից և էլեկտրատեխնիկական հաշվարկներից, նախագծով նախատեսվում է օդային զիծը կառուցել AC-35 տեսակի հաղորդալարերով: Համաձայն 3.407-150 տիպային նախագծի և ըստ Վազաշեն համայնքի 300 Օհմ.մ հողի տեսակարար դիմադրության կատարվելու է հենասյուների հողանցում:

1200 մ երկարությամբ էլեկտրամատակարարման օդային զիծը անցնելու է Վազաշեն համայնքի վարչական սահմաններում գտնվող Իջևանի անտառտնտեսության Այգեհովիտ անտառպետության տարածքով: Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտություն կլինի իրականացնել օդային զծի ուրվագծում գտնվող ծառերի հատումներ և էտումներ: Հատման ենթակա ծառերը նույնականացնելու և գույքագրելու համար <<Հայաստանի էլեկտրական Ցանցեր>> ՓԲԸ <<Աղստև>> մասնաձյուղի տնօրենը գրությամբ դիմել է <<Հայաստան>> ՊՈԱԿ-ի Իջևանի անտառտնտեսության ղեկավարությանը՝ նշված աշխատանքները իրականացնելու նպատակով: Արդյունքում, ստեղծվել է համատեղ հանձնաժողով, բաղկացած Իջևանի անտառտնտեսության և <<Հայաստանի էլեկտրական Ցանցեր>> ՓԲԸ <<Աղստև>> մասնաձյուղի աշխատակիցներից, որոնք անցնելով կառուցման ենթակա օդային զծի ուրվագծով հաշվառել են խանգառող ծառերը, ինչպես նաև հաշվարկել դրանց կտրումից առաջացող վնասը և այլ ծախսեր՝ կազմելով հատատեղի հաշվեգնահատման ցուցակ:

Պարզվել է, որ հատման ենթակա են թվով 32 ծառ՝ հիմնականում մինչև 20 մ տրամագծով: Ծառահատումից առաջանալու է 3.94 մ³ ծավալով փայտանյութ:

ՀՀ բնապահպանության նախարարի 09.04.2014թ.-ի թիվ 88-Ն, ՀՀ գյուղատնտեսության նախարարի 17.04.2014թ.-ի թիվ 96-Ն և ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 14.04.2014թ.-ի թիվ 53-Ն համատեղ հրամանի հավելվածի համաձայն էլեկտրական ցանցերի համակարգի անխափան գործունեությունն ու անտառողիներում, անտառների և անտառային հողերի տարածքներում հրդեհաանվտանգ վիճակն ապահովելու նպատակով՝ Կատարողը (տվյալ դեպքում <<Հայաստան>> ՊՈԱԿ-ի <<Իջևանի անտառտնտեսություն>> մասնաձյուղը) պարտավորվում է Պատվիրատուի (<<ՀԷՑ>> ՓԲԸ) հետ համատեղ ուսումնասիրությունների հիման վրա կազմված և փոխհամաձայնեցված հատման ենթակա ծառերի հաշվեգնահատման ցուցակի հիման վրա տրված անտառհատման տոմսերով, կատարելու համապատասխան հատման և էտման աշխատանքներ, ինչպես նաև հրդեհավտանգ ժամանակաշրջանում ապահովելու հենասյուների անվտանգությունը, դրանք ըստ անհրաժեշտության շրջափակելով հանքայնացված հողաշերտով, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ապահովել վերոնշյալ աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների տրամադրումը:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվում է շինարարական հարթակների ջրցանի, ինչպես նաև ինժեներատեխնիկական անձնակազմի, բանվորների և վարորդների կոմունալ կենցաղային կարիքների ապահովման համար:

Նախատեսվող գործունեության տարածքում 23 հատ հենասյան տեղադրման համար փորվելու է 33 փոս: Փոսերը փորվելու են ձեռքով, դրանց զուամրային ծավալը կազմելու է 112.2 մ³ (յուրաքանչյուր փոսի ծավալը կազմելու է 3.4 մ³): Գրունտի վերին բերրի շերտը (մոտ 20 մ³ ծավալով), ինչպես նաև մնացած զանգվածը (մոտ 92.2 մ³ ծավալով) պահվելու է



շինհրապարակում և կիրառվելու է տեղադրվող հենասյունների հիմքերի ամրացման և տարածքի ռեկուլտիվացման համար:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում մթնոլորտի հիմնական աղտոտիչներն են շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում առաջացող գազանման արտանետումները (վառելիքի այրման արդյունքում):

Մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումները և նախատեսվող գործունեության իրականացման ցուցանիշների վերլուծությունը ցույց է տվել, որ մթնոլորտային արտանետումները չնչին են (էլեկտրամատակարարման օղային գծի հենասյունների տեղադրման աշխատանքների ընթացքում վնասակար նյութերի արտանետումների գումարային ծավալը կկազմի 0.1278տ) և էական ազդեցություն /աղտոտում չեն ունենա շրջակա միջավայրի վրա:

Գործունեության ենթակա տարածքում բոլոր հեղուկ նյութերը պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերից խուսափելու համար: Փոշի առաջացնող նյութերը մինչ օգտագործումը, ինչպես նաև անբարենպաստ մթնոլորտային պայման: Նշված հնարավոր արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների մեկնարկը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց կիրառմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական և կոլեկտիվ պահպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնություն, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի Կապան քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

Եզրահանգում

Այսպիսով՝ նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են ՀՀ բնապահպանության նախարարության ստորաբաժանումները, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը: Փորձաքննական գործընթացում նախագիծը լրամշակվել է և հաշվի է առնվել արված դիտողություններն ու առաջարկությունները:



Փորձաքննական պահանջներ

1. Նախատեսվող գործունեության ընթացքում նախատեսվող ծառահատումներն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 2, Նախատեսվող գործունեության ընթացքում առաջացած շինարարի (կենցաղային արբի), հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Էյ Թի Էմ Էս Սոլյուշնս>> ՍՊԸ <<Իջևան>> էլ.ցանց, Վազաշեն գյուղում տեղադրվող 400/6 կՎԱ հզորության ԼՏԵ-ի ճկՎ էլեկտրամատակարարում>> նախագծի գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ



Զ. Զուռնայան